ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

26 ապրիլի 2024 թվականի թիվ 40-Ա

ք.Երևան

«ԲԱՐԳԱՎԱՃՈՂ ՑԱՆՑԵՐ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովն (այսուհետ նաև՝ Հանձնաժողով), ուսումնասիրելով 2024 թվականի ապրիլի 11-ին իր նախաձեռնությամբ հարուցված թիվ 16 վարչական վարույթի նյութերը, պարզեց.

Հանձնաժողովը «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքով (այսուհետ նաև՝ Օրենք) վերապահված իր վերահսկողական գործառույթներն իրականացնելիս հայտնաբերել է Օրենքի պահանջի խախտում, այն է՝ «ԲԱՐԳԱՎԱՃՈՂ ՑԱՆՑԵՐ» ՍՊ ընկերության (այսուհետ նաև՝ ցանցային օպերատոր) կողմից իր 2023 թվականի հասույթի գոյացման բացվածքը և չափի վերաբերյալ տեղեկությունը մինչև 2024 թվականի ապրիլի 01-ը Հանձնաժողով չներկայացնելը:

2024 թվականի մարտի 12-ին Հանձնաժողովի կողմից Հեռարձակողների և ցանցային օպերատորների ղեկավարներին է հասցեագրվել թիվ Ե/04/04.1/234-24 գրությունը Օրենքի 19-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջների կատարման անհրաժեշտության մասին:

Հանձնաժողովում նշված գրության վերաբերյալ ցանցային օպերատորից պատասխան չի ստացվել, որն էլ հիմք է հանդիսացել վարչական մարմնի կողմից վարչական վարույթ հարուցելու համար:

Ուստի, ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով, Հանձնաժողովը 2024 թվականի ապրիլի 11-ին ցանցային օպերատորի նկատմամբ հարուցել է վարչական վարույթ և 2024 թվականի ապրիլի 11-ի թիվ Ե/04/04.1/309-24 գրությամբ ծանուցել է ցանցային օպերատորին՝ հայտնելով, որ հարուցված վարչական վարույթի վերաբերյալ կարող են ներկայացնել իրենց պարզաբանումները և բացատրությունները:

Ցանցային օպերատորը 2024 թվականի ապրիլի 12-ի գրությամբ Հանձնաժողով է ներկայացրել 2023 թվականի ընթացքում ինտերնետ և թիվի ծառայությունների տրամադրումից գոյացած հասույթի մասին տեղեկատվությունը, ինչպես նաև պարզաբանումներ՝ նշելով, որ իրենց կողմից 29.03.2024 թվականին info@primesystems.am

էլեկտրոնային փոստի հասցեից Հանձնաժողովի secretariate@tvradio.am էլեկտրոնային հասցեին է ուղարկվել հասույթի վերաբերյալ տեղեկությունը, սակայն գուցե տեխնիկական պատճառներով չի ստացվել Հանձնաժողովում:

Այսպես, ցանցային օպերատորը հայտնել է, որ «ԲԱՐԳԱՎԱՃՈՂ ՑԱՆՑԵՐ» ՍՊ ընկերության info@primesystems.am էլ. հասցեից ուղարկվել են հետևյալ նամակները.

1. 20.03.2024 թվականին secretariate@tvradio.am էլ. հասցեին ալիքների ցանկի վերաբերյալ գրություն,

2. 29.03.2024 թվականին secretariate@tvradio.am էլ. հասցեին հասույթի վերաբերյալ գրություն,

3. 08.04.2024 թվականին licensing@tvradio.am էլ. հասցեին ալիքների ցանկի վերաբերյալ գրություն /excel ֆայլով/:

Ցանցային օպերատորը նշել է նաև, որ մինչ 12.04.2024 թվականին վարչական վարույթ հարուցելու մասին կարգավորող պետական մարմնի ծանուցումը ստանալը տեղեկացված չեն եղել տեխնիկական խնդիրների մասին, և որ այս բոլոր գրությունները չեն ստացվել Հանձնաժողովում: Գրությանը կից ցանցային օպերատորը կրկին ներկայացրել է նշված նամակները, ինչպես նաև դրանց նախկինում ուղարկված լինելու մասին էլեկտրոնային փոստից քաղվածքներ (սքրինշոթեր):

Հանձնաժողովի հիմնավորումները (պատճառաբանությունը) և եզրահանգումը.

Այսպիսով, վարչական վարույթի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննությամբ, ձեռք բերված ապացույցների ուսումնասիրության և գնահատման արդյունքում Հանձնաժողովն ամրագրում է հետևյալը.

Համաձայն Օրենքի 1-ին հոդվածի 4-րդ մասի՝ սույն օրենքը Հայաստանի Հանրապետությունում տարածվում է տեսալսողական մեդիածառայություն մատուցողների, օպերատորների, կարգավորող պետական մարմնի և հանրային տեսալսողական մեդիածառայություն մատուցողի գործունեության կառավարումն ապահովող և հսկողություն իրականացնող մարմնի վրա:

Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ ցանցային օպերատորը՝ ֆիզիկական կամ իրավաբանական անձ է, որը սեփականության կամ այլ իրավունքով ունի մալուխային կամ այլ ցանց (բացառությամբ հաճախականային սահմանափակ ռեսուրս օգտագործելու դեպքերի) և ապահովում է տվյալ ենթակառուցվածքի տեխնիկական շահագործումը.

Օրենքի 19-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հեռարձակողները և օպերատորները պարտավոր են յուրաքանչյուր տարի մինչև ապրիլի 1-ը կարգավորող պետական մարմին ներկայացնել նախորդող տարվա հասույթի գոյացման բացվածքը և չափի վերաբերյալ տեղեկություն:

Ուստի Օրենքով սահմանված նորմերի պահանջները պարտադիր են ոլորտում գործունեություն իրականացնող բոլոր տեսալսողական մեդիածառայություն մատուցողների և օպերատորների համար:

Հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել են վարչական վարույթի վերաբերյալ ցանցային օպերատորի կողմից ներկայացված բացատրություններն ու պարզաբանումները և նաև վարչական վարույթի շրջանակում ցանցային օպերատորի կողմից ներկայացված ապացույցները:

Ուսումնասիրությունից պարզ է դարձել, որ «ԲԱՐԳԱՎԱՃՈՂ ՑԱՆՑԵՐ» ՍՊ ընկերության info@primesystems.am էլեկտրոնային հասցեից 29.03.2024 թվականին secretariate@tvradio.am էլեկտրոնային հասցեին է ուղարկվել նամակ և մեկ PDF ֆայլ «Հասույթ 2024» վերնագրով, որի վերաբերյալ ցանցային օպերատորը որպես ապացույց ներկայացրել է էլեկտրոնային փոստից քաղվածքներ (սքրինշոթեր):

Փաստենք նաև, որ Հանձնաժողովի քարտուղարությունում անցկացվել է ուսումնասիրություն ցանցային օպերատորի կողմից նշված նամակների ուղարկման վերաբերյալ, որի առթիվ Հանձնաժողովի քարտուղարության պետի կողմից ներկայացվել է զեկուցագիր, որում նշվում է՝

2024 թվականի մարտի 29-ին Հանձնաժողովի քարտուղարության secretariate@tvradio.am էլեկտրոնային հասցեին «ԲԱՐԳԱՎԱՃՈՂ ՑԱՆՑԵՐ» ՍՊ ընկերության կողմից ոչ մի նամակ չի ստացվել: Հանձնաժողովի քարտուղարության պետը սույն հարցի վերաբերյալ խորհրդակցել է Հանձնաժողովի էլեկտրոնային փոստի համար պատասխանատու աշխատակցի հետ, ով պնդում է, որ Հանձնաժողովն էլեկտրոնային փոստի հետ կապված չունի որևէ տեխնիկական խնդիր: Կից ներկայացվել է վերոնշյալ էլեկտրոնային հասցեի՝ հիշյալ օրվան նախորդող և հաջորդող օրերի նամակագրության սքանավորված էջերը՝ 4 (չորս) թերթ:

Այսպիսով, վարչական վարույթի նյութերի ուսումնասիրության և համադրման արդյունքում Հանձնաժողովն ամրագրում է, որ Օրենքով Հեռարձակողների և օպերատորների համար պարտավորություն է սահմանված յուրաքանչյուր տարի մինչև ապրիլի 1-ը Հանձնաժողովին ներկայացնել նախորդող տարվա հասույթի գոյացման բացվածքը և չափի վերաբերյալ տեղեկություն:

Փաստենք նաև, որ ցանցային օպերատորը 2020 թվականի նոյեմբերի 26-ից հանդիսանում է Հանձնաժողովի կողմից լիցենզավորված իրավաբանական անձ (սփռման տարածքը՝ Կոտայքի մարզ):

Հանձնաժողովի կողմից հաշվի են առնվել ցանցային օպերատորի կողմից ներկայացված պարզաբանումներն ու փաստարկները, մասնավորապես, որ նշված վարույթի շրջանակում կարգավորող պետական մարմնի համար անհրաժեշտ տեղեկատվությունը՝ հասույթի գոյացման բացվածքը և չափի վերաբերյալ տեղեկությունը ապրիլի 1-ի վերջնաժամկետին՝ 29.03.2024 թվականին իրենց կողմից ներկայացվել է secretariate@tvradio.am էլեկտրոնային հասցեին, սակայն գուցե պայմանավորված էլեկտրոնային փոստի տեխնիկական խնդիրներով չի ստացվել Հանձնաժողովում:

Փաստենք նաև, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 10-րդ հոդվածով նախատեսված է հավաստիության կանխավարկածը՝

«1. Վարչական մարմնի կողմից քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ անձի ներկայացրած տվյալները, տեղեկությունները համարվում են հավաստի բոլոր դեպքերում, քանի դեռ վարչական մարմինը հակառակը չի ապացուցել:

Արգելվում է անձանցից պահանջել իրենց ներկայացրած տվյալները, տեղեկությունները հավաստող փաստաթղթեր կամ լրացուցիչ տեղեկություններ, եթե այդ պահանջը սահմանված չէ օրենքով:

Եթե վարչական մարմինը հիմնավոր կասկածներ ունի անձանց ներկայացրած տվյալների, տեղեկությունների իսկության վերաբերյալ, ապա ինքը պարտավոր է ինքնուրույն և իր հաշվին ձեռնարկել միջոցներ՝ դրանց իսկության մեջ հավաստիանալու համար:

2. Անձինք պատասխանատվություն են կրում վարչական մարմիններին կեղծ տվյալներ, տեղեկություններ ներկայացնելու համար:»

Այսպես, Հանձնաժողովը, հիմք ընդունելով վերը նշված օրենքների դրույթները, ընդունում է ցանցային օպերատորի կողմից ներկայացված ապացույցները որպես հավաստի, և որպես վարչական մարմին՝ չունի հիմնավոր կասկածներ ցանցային օպերատորի կողմից ներկայացված տվյալների, տեղեկությունների և ներկայացված ապացույցների իսկության վերաբերյալ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ցանցային օպերատորը փաստացի Օրենքով նախատեսված ժամկետում՝ մինչև 2024 թվականի ապրիլի 1-ը կարգավորող պետական մարմին ուղարկել է ընկերության 2023 թվականի հասույթի գոյացման բացվածքը և չափի վերաբերյալ տեղեկությունը, սակայն այն տեխնիկական պատճառներով չի ստացվել Հանձնաժողովում, և հիմք ընդունելով այն փաստը, որ Հանձնաժողովը չունի հիմնավոր կասկածներ ցանցային օպերատորի կողմից ներկայացված տվյալների, տեղեկությունների և ներկայացված ապացույցների իսկության վերաբերյալ՝ ուստի վարչական վարույթի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննությամբ, ձեռք բերված ապացույցների ուսումնասիրության և գնահատման արդյունքում Հանձնաժողովն արձանագրում է, որ վարչական իրավախախտման դեպքի կամ կազմի բացակայության հիմքով ցանցային օպերատորի նկատմամբ հարուցված թիվ 16 վարչական վարույթը ենթակա է կարճման:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի 247-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված է՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը չի կարող սկսվել, իսկ սկսվածը ենթակա է կարճման հետևյալ հանգամանքների առկայության դեպքում՝

1) վարչական իրավախախտման դեպքի կամ կազմի բացակայությունը:

«**Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի 282-րդ հոդվածի համաձայն**՝ քննելով վարչական իրավախախտման վերաբերյալ գործը՝ մարմինը (պաշտոնատար անձը) ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝

1) վարչական տույժ նշանակելու մասին.

2) գործի վարույթը կարճելու մասին:

Գործի վարույթը կարճելու մասին որոշում ընդունվում է բանավոր դիտողություն հայտարարելու, նյութերը ընկերական դատարանի, ձեռնարկությունում, հիմնարկում, կազմակերպությունում և դրանց կառուցվածքային ստորաբաժանումներում ստեղծված՝

հարբեցողության դեմ պայքարի հանձնաժողովի, հասարակական կազմակերպության կամ աշխատավորական կոլեկտիվի քննությանը հանձնելու կամ դատախազին, նախաքննության կամ հետաքննության մարմնին հանձնելու դեպքում, ինչպես նաև սույն օրենսգրքի 247 հոդվածով նախատեսված հանգամանքների առկայության դեպքում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 1-ին հոդվածի 4-րդ մասով, 3-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 19-րդ հոդվածի 3-րդ մասով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 10-րդ հոդվածով և հիմք ընդունելով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 247-րդ հոդվածի 1-ին կետի, 282-րդ հոդվածի դրույթները՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը ***որոշեց***՝

1. «ԲԱՐԳԱՎԱՃՈՂ ՑԱՆՑԵՐ» ՍՊ ընկերության նկատմամբ հարուցված թիվ 16 վարչական վարույթը կարճել:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն «ԲԱՐԳԱՎԱՃՈՂ ՑԱՆՑԵՐ» ՍՊ ընկերությանը պատշաճ ձևով հանձնելու օրվան հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ **Տ.ՀԱԿՈԲՅԱՆ**

2024թ. ապրիլի 26
ք.Երևան